



Իմ այս բացահայտման նպատակը մարդկանց տեղեկացնելն է հայկական արտադրության «Մետֆորմին» դեղորայքի բաղադրության անհամապատասխանության մասին: Շաբարախով հիվանդները, որոնք ֆինանսապես դժվար վիճակում են եւ ստիպված են օգտվել կառավարության տրամադրած անվճար «Մետֆորմին»-ից, պետք է տեղեկացված լինեն:

Կարդացե՛ք էջ 4



Երբ մեկը մի հաջող գազալցակայան բացի, մյուսը, փոխանակ այն ամբողջացնող մի քիզնե ընտրի ու դնի նրա մոտ, կգա, ճիշտ նույն ծառայությունը մատուցող մի գազալցակայան էլ ինքը կբացի՝ ճիշտ նրա կողքին: Երրորդը կանի նույնը... Զետեաբար, եթե մեկ հոգին, լինելով սեփականատերը, շահ էր գրանցելու, հիմա երեքով վնասվելու են:

Կարդացե՛ք էջ 6



Իր իշխանության առաջին օրից մինչ օրս աշխատատեղեր է բացել միայն հնդիկների, աֆղանցիների, պակիստանցիների, ռուս եւ ուկրաինացի ռեյտանտների համար: ԶՊ-ն մի ոչ պակաս դրոմ էլ ԱԺ-ում ունի: Երկու օր առաջ նա էր հայտարարել, որ իրենք Հայաստանը վերածել են մի երկրի, ուր այլ երկրներից մարդիկ «խոպան» են գալիս:

Կարդացե՛ք էջ 8

Hraparak daily newspaper  
4/41 Mashtoc St.  
0010 Yerevan, RA  
tel.52 66 70  
info@hraparak.am

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 22 (4157), 19 փետրվար, հինգշաբթի, 2026



www.hraparak.am

# րադարակ

ՔՊ-ում նախընտրական քուցակի համար ներկուսակցական ընտրություններից հետո բազմաբեւեռ խոսակցությունների ու դժգոհությունների պարարտ հող է ստեղծվել: Բուռն քննարկում են հատկապես արտգործնախարար Արարատ Միրզոյանի անսպասելի բարձր ձայները: Նա իր գրանցած քուցակիչով ԶՊ-ում 4-րդն է՝ Փաշինյանից, Սուրեն Պապիկյանից եւ Գեւորգ Պապոյանից հետո: Միրզոյանը 2020 թվականի նոյեմբերի 9-ի գիշերվա հայտնի դեպքերից հետո, երբ դաժան ծեծի ենթարկվեց, կարծես կուսակցական ակտիվ գործունեությամբ չէր զբաղվում, իսկ վարչության վերջին ընտրություններին անգամ հայտ չներկայացրեց՝ կուսակցության ղեկավար կազմում ընդգրկվելու համար: Բացի այդ, ի պաշտոնն էլ չի ներգրավվում իշխող ուժի ագրեսիվ քարոզչությանը: Ուստի, շատերի կարծիքով, այս ինքնամեկուսացումը պետք է հետք թողներ Միրզոյանի եւ նրա վարկանիշի վրա, եւ շարքերը նրան պետք է իր տեղը ցույց տային, բայց տեղի ունեցավ հակառակը, ինչը կնշանակի, որ անգամ ԶՊ-ում են ընդունում ու գնահատում ոչ շատ ագրեսիվ, ապակուսակցական պահվածքը: Եթե Փաշինյանի ձայները կապված են մի շարք հանգամանքների, նախնաճառ՝ վախի գործոնի հետ, Պապոյանի ու Պապիկյանի հարցում դեր են խաղացել ԶՊ մարզային կառույցների հետ ակտիվ կապերը, ապա շարքային ԶՊ-ականների հետ, կարելի է ասել, բացարձակապես կապ չունեցող Միրզոյանն իր ձայները ստացել է, թերեւս, այն պատճառով, որ չէզոք է եւ հավասարակշիռ: Թեեւ կարծիք կա, որ նրա օգտին քվեարկել են՝ հաշվի առնելով խաղաղության գործընթացում նրա դերակատարումը:



## Մինչեւ հաջորդ կրակոցը

Որքան էլ իշխանությունը փորձում է ձեւացնել, թե երկրում ամեն ինչ լավ է՝ մենք խաղաղության եւ զարգացման ուղին ենք բռնել, բյուջեն աճում է, սահմանին կրակոցներ չկան, միջազգային կառույցներին ենք անդամագրվում, երկիրն ապահով ձեռքերում է, փաստերը ճիշտ հակառակի մասին են վկայում: Պարբերաբար բռնկվող սկանդալներն ու միջադեպերը խոսում են այն մասին, որ երկրում տեր-տիրական չկա՝ ամեն ինչ թեթև կացրած է, մի կերպ շնչում-գոյատևում է: Եվ հարցն ոչ միայն սոցիալական ծանր վիճակն է, աճող գներն ու անվտանգության երեքուն վիճակը, այլեւ երկրի ներսում առկա կրիմիալ միջավայրը: Ընդամենը ամիսներ են անցել Փարաբարի ընդդիմադիր համայնքապետի սպանությունից, որը ցնցեց հանրությանն իր դաժանությամբ եւ անարդարությամբ: Մինչդեռ ոստիկանությունը, ՆԳՆ-ն բոլոր հնարավորություններն ունենին՝ այդ սպանությունը կանխելու, եթե իրենց ողջ ուշադրությունը կենտրոնացած չլիներ Նիկոլ Փաշինյանի պաշտպանության, նրա քաղաքական շահերը սպասարկելու գործի վրա: Հիմա էլ կրիմիալ էլեմենտներն են իրար վրա կրակում՝ օրը ցերեկով, Երեւանի փողոցներում: Կրկին վենդետա՝ նախկին սպանության հետքերով: Եվ կրկին ոստիկանության ապաշտորհության, անփութության, ոչ պրոֆեսիոնալ աշխատանքի պատճառով: Ամենակարեւորը՝ սա ոչ այնքան ոստիկանապետի ու ՆԳ նախարարի մեղքն է, որքան երկրի իշխանությունների, պետության ղեկին գտնվող անձի մեղքը, որն այնպիսի իրավիճակ է ստեղծել երկրում, որ ամեն ինչ ծառայեցվել է իր անձին, իր ղեկավարած քաղաքական ուժի վերարտադրությանը: Որտեղ իրեն անմատչող սկիզբած անձինք են միայն պաշտոն զբաղեցնում, եւ իր կամքն է թելադրողը: Թե հասարակությունն ինչպես կապրի, ինչ կմտածողի նրան, որը կլինի հանրային անվտանգության ապահովման բանաձեւը, նրան չի հետաքրքրում:

Իշխանական շրջանակներում մեծ ցնծություն է առաջացրել այն լուրը, որ իշխանությունն այլեւս չի կարողանում գաղտնալսել իրենց Տելեգրամ եւ Սիգնալ կապերով խոսակցությունները: Նախկինում գիտեին, որ իշխանությունը հայտնի «Պեգասուս» գաղտնալսող ծրագիրն է ձեռք բերում, որպեսզի տեղադրի քաղաքական հակառակորդների, լրագրողների, հայտնի հանրային գործիչների հեռախոսների մեջ եւ լսի: «Պեգասուս» ծրագիրը, որպես կանոն, տրամադրվում է տվյալ երկրի իշխանություններին՝ պետության անվտանգության նկատառումներով օգտագործելու նպատակով: Սակայն երբ ծրագիրը վաճառողները պարզել են, որ ՀՀ իշխանությունն այն բացառապես քաղաքական նկատառումներով է կիրառել, դադարեցրել են այդ ծրագրի վաճառքը, եւ ԶՊ-ականները մեծ հրճվածք են ապրել:



Օրեր առաջ դադարեցվեցին ՄԴ դատավոր Հրայր Թովմասյանի լիազորությունները, քանի որ նրա նկատմամբ մեղադրական դատավճիռը մտավ ուժի մեջ: Սա նշանակում է, որ բարձր դատարանում դատավորի թափուր տեղ կա: ՄԴ դատավորի թեկնածու առաջադրելու հերթն այժմ ՀՀ նախագահինն է: Տեղեկություններ կան, որ պետության թիվ մեկ տուրիստն այդ պաշտոնում դիտարկում է «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության անդամ Տիգրան Եգորյանին, որի հետ ճանապարհ է անցել ՀԱԿ-ում եղած տարիներին: Տիգրան Եգորյանն ու նրա կինը՝ Լուսինե Հակոբյանը, նաեւ այս իշխանությունների հետ սերտ կապեր ունեն: Եգորյանը նաեւ սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի անդամ է: Պարզ է, որ որոշումը կայացվելու է Փաշինյանի կարիքներով:

## ՈՐՈՇԵՆ ԵՆ ՎԱՄՁՅԵՎՊԵՏՆԵՐԻ ՎԱՆԵՐ ԲՈՆԵՆ

Որքան մոտենում են ընտրությունները, այնքան մեծանում են ճնշումներն ընդդիմադիր շրջանակների եւ նրանց համակիրների նկատմամբ: Բացառապես բրեւական մեթոդներով իր քաղաքական հակառակորդների դեմ պայքարող իշխանությունները, որոշ տեղեկություններով, մտավախություններ ունեն, որ իշխանության մեջ գտնվողների մի մասն էլ է իրենց դեմ: Մեր տեղեկություններով, Նիկոլ Փաշինյանը մարզպետների միջոցով որոշել է համայնքապետների վախը բռնել: Նրանց

նախագուշակացրել են՝ եթե համապետական ընտրություններին խաղեր տան ընդդիմադիր ուժերի համար, չեն ներվի: Անգամ չեն սպասելու, որ ընտրություններն ավարտվեն՝ կպատժեն: Ոչ իշխանական համայնքապետներից մեկը մեզ ասաց, որ դա չի նշանակում, թե իրենք վախեցել են այդ զգուշացումներից: Նախ՝ անվտանգ աշխատելու բոլոր ձեւերը գիտեն եւ չեն պատրաստվում դավաճան իշխանության օգտին աշխատել ու ամեն ինչ անելու են իշխանափոխության համար:







«Հրապարակի» հարգելի խմբագիր տիկին Արմինե Օհանյան, Ձեզ կրկին գրում է ֆրանսահայ բժիշկ, «Հայ-մեր» բժշկական մարդասիրական ընկերության նախագահ, անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ Ժան-Միշել Գոլիանսեն Էբերյանը:



### ԲԺՇԿԻ ԲԱՅԱՆԱՅՏՈՒՄՆԵՐԸ

Ես ուզում եմ շարունակել իմ բացահայտումների շարքը Զայաստանի առողջապահության համակարգի աշխատանքի բացասական այն կետերի վերաբերյալ, որոնք ունեն վտանգավոր են նույնիսկ մահաբեր հետեւանք հիվանդների համար: Նամակը ես կարող էի հասցեագրել ՀՀ առողջապահության նախարար՝ տիկին Անահիտ Ավանեսյանին, սակայն քանի որ ձեր հրաշալի թերթի ընթերցողն եմ եւ հավատում եմ ձեր թերթի ուժին, որոշեցի ձեր էջերում հանդես գալ:

«Հայ-մեր» բժշկական մարդասիրական ընկերության շրջանակներում տարվա ընթացքում մի քանի անգամ այցելում եմ Զայաստան՝ ինձ հետ բերելով նաեւ 4-5 ֆրանսահայ եւ ֆրանսիացի բժիշկներ: Այցելում ենք հիմնականում Զայաստանի մարզեր, գյուղեր, որտեղ ապրում են անապահով ընտանիքներ, քանի որ նրանց համար ֆինանսապես դժվար է հասնել Երեւանի հիվանդանոցներ եւ ստանալ վճարովի բուժում: Մեր բժշկական խորհրդատվությունների ընթացքում մեկ օրում ընդունում եւ հետազոտում ենք մոտ 50 հիվանդի, որոնք դիմում են տարբեր զանգատներով՝ կարդիոստենոզից եւ հիպերտոնիայից մինչեւ վահանաձեւ գեղձի անբավարարություն եւ շաքարախտ: Ամեն անգամ, երբ հետաքրքրվում ենք շաքարախտով հիվանդների առողջական վիճակով՝ արդյոք կամ կայունացում, որպեսզի խուսափեն

արդյունավետ լինել շաքարախտով հիվանդների համար:

Տարիներ շարունակ լսելով հայ հիվանդների բողոքներն այս դեղի մասին՝ մտածում էի, որ հնարավոր է բաղադրության մեջ առկա է այլ նյութ, որը նվազեցնում է արդյունավետությունը, սակայն պարզվեց, որ այն պարզապես արտադրվում է 500 միլիգրամ դոզավորմամբ՝ տուփի վրա նշված 1 գրամի փոխարեն: Սա լուրջ խախտում է: Որքան գիտեմ, արդեն գրեթե 15 տարի այս դեղամիջոցն արտադրվում է Զայաստանում, սակայն չգիտեմ՝ սկզբից ի վեր նման խախտումներով է արտադրվել, թե ոչ: Ես այդ խախտման մասին տեղեկացրի ՀՀ կառավարությանը եւ ՀՀ առողջապահության նախարարությանը՝ նախարարի խորհրդակցականի միջոցով՝ ներկայացնելով ֆրանսիական տոբեթիկոլոգիական լաբորատորիայի եզրակացությունը՝ որպես հիմնավորում: Նախարարի խորհրդակցականը խոստացավ անձամբ փորձանցել տեղեկատվությունը նախարարին եւ պատասխանի դեպքում ինձ կտեղեկացնել: Դիմեցի նաեւ Զայաստանում գործող «Դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավարությանը եւ ուղարկեցի փաստաթղթերը՝ ահազանգելով «Մետֆորմին»-ի բաղադրության անհամապատասխանության մասին: Սակայն արդեն մեկուկես ամիս է անցել, եւ որեւէ պատասխան չեմ ստացել ոչ այդ կենտրոնից, ոչ էլ նախարարությունից:

Այդ պատճառով որոշեցի հանրայնացնել ինդիվիդ խոսելով դրա մասին ձեր թերթում, որպեսզի ժողովուրդը տեղեկանա այդ խախտման մասին: Իմ կարծիքով՝ ՀՀ կառավարության լուրջությունը եւ այն, որ մինչ այժմ որեւէ պատասխան չեմ ստացել, արդեն կարող է նշանակել, որ իրենք բաց տեղյակ են այդ խախտման մասին, եւ ավելի վատ՝ հնարավոր է նաեւ, որ մասնակից են այդ գործարքին: ՀՀ կառավարությունը, տեղյակ լինելով «Մետֆորմին» դեղի հետ կապված խնդիրների մասին, ոչինչ չփոխեց՝ մինչ այսօր դեղը շարունակում է արտադրվել նույն բաղադրությամբ: Ցուցադրաբար շարունակում են գովազդել եւ գովաբանել հայկական արտադրության «Մետֆորմինը»՝ հայտարարելով, թե այն շատ է օգնում շաքարախտով հիվանդներին, եւ որ կառավարությունն այն անվճար տրամադրում է բոլոր հիվանդներին: Սակայն իրականությունը բոլորովին այլ է, ինչը նշանակում է, որ ՀՀ կառավարությունը չի հարգում իր ժողովրդին, եթե թույլ է տալիս նման խաբեություն: Նշեմ նաեւ, որ եթե ՀՀ կառավարությունը եւ առողջապահության նախարարությունը ժխտեն այս խախտումը, դա կլինի երկրորդ խաբեությունը սեփական ժողովրդի հանդեպ: Այս հետազոտության արդյունքների մեջ որեւէ կասկած չկա, հետազոտությունն իրականացվել է ամենաժամանակակից մեթոդներով եւ կրկնակի ստուգված: Երկրորդ հետազոտությամբ ես հաստատվել է, որ հայկական արտադրության «Մետֆորմին»-ը մեկ գրամի փոխարեն պարունակում է 500 միլիգրամ, այսինքն՝ կես դոզա: Այս խաբեության նպատակն ակնհայտ է՝ նույն հումքից երկու անգամ ավելի շատ դեղորայք արտադրել եւ վաճառել: Գիտե՞ք, որ Զայաստանում այն անվճար է տրամադրվում շաքարախտով հիվանդներին, սակայն իրականում այն անվճար

չէ: պետությունն այն գնում է դեղագործական ընկերությունից պետական միջոցներով եւ բաժանում բաղադրանքներին: Այսինքն՝ մարդիկ շահույթ են ստանում դեղորայքի բաղադրության խաբեության հաշվին: Ցավոք, այսօր Զայաստանում առաջին կրոնը ոչ թե քրիստոնեությունն է, այլ՝ փողը:

Ես առայժմ միայն այս դեղորայքն եմ ստուգել տվել ֆրանսիական լաբորատորիայում, քանի որ հիվանդների բողոքները շատ էին: Դեռ չեն ստուգվել այնպիսի դեղեր, ինչպիսիք են «Կարդիոմազնիլ»-ը կամ «Ամոքսիցիլին»-ը, որոնք լայնորեն օգտագործվում են, եւ հիվանդներն այդ դեղերից էլ են դժգոհ: Եվ ես գրեթե վստահ եմ, որ այդ դեղերի բաղադրության մեջ եւս կարող են լինել խախտումներ: Իհարկե, կարող էի նաեւ այդ դեղերը ստուգել տալ, սակայն չցանկացա, որ իրավիճակն ավելի անթափ դառնա, եթե ֆրանսիական լաբորատորիան հաստատի, որ հայկական արտադրության մի քանի դեղամիջոց չի համապատասխանում դրանց տուփերի վրա նշված բաղադրությանը: Չեմ ուզեցա ամոթով մնալ ֆրանսիացի մասնագետների առաջ, որ ՀՀ կառավարությունը խաբում է իր ժողովրդին:

Եթե ժողովրդին կեղծ կամ անարդյունավետ դեղորայք են տրամադրում, դա ոչ միայն անօգուտ է, այլ նաեւ՝ շատ վտանգավոր: Շաքարախտի դեպքում, եթե օրգանիզմում շաքարի մակարդակը չի կարգավորվում դեղորայքով, կարող են զարգանալ լուրջ բարդություններ, քանի որ շաքարախտն ինքնին անմիջապես չի սպանում մարդուն, սակայն չբուժվող կամ սխալ բուժվող շաքարախտի հետեւանքով կարող են առաջանալ բազմաթիվ լուրջ բարդություններ, որոնք ժամանակին չբուժվելու եւ գրագետ վերահսկողության բացակայության դեպքում կարող են հանգեցնել մահվան: Օրինակ՝ երիկամային անբավարարության, որը կհանգեցնի դիալիզի անհրաժեշտության, իսկ տարիների ընթացքում կարող է դառնալ մահվան պատճառ: Սրտի զարկերակների անբավարարության, որի դեպքում հաճախ անհրաժեշտ է ստենտավորում: Աչքերի տեսողության մասնակի կամ ամբողջական կորուստը եւ շաքարախտի բարդություններից է, որը զարգանում է ժամանակի ընթացքում: Հնարավոր են նաեւ լյարդի եւ երիկամների խնդիրներ, ինչպես նաեւ՝ ինֆարկտ եւ ինսուլտ: Եվ այս ամենը՝ շաքարախտի սխալ բուժման կամ բուժումն ունենալու հետեւանքով: Ինչպես գիտե՞ք, այսօր Զայաստանում պետպատվերի շրջանակում հետազոտվելու համար հիվանդը հաճախ ստիպված է սպասել 3-4 ամիս, ինչը կարող է ճակատագրական լինել հիվանդի համար:

Իհարկե, Զայաստանում կան նաեւ այլ դեղամիջոցներ շաքարախտով հիվանդների համար, սակայն միայն հայկական արտադրության միջոցներով եւ ամվճար տրամադրվում, մյուս դեղերը վճարովի են եւ բավականին թանկ: Որոշ հիվանդներ գնում են ֆրանսիական կամ գերմանական արտադրության «Մետֆորմին», որոնք իսկապես օգնում են, սակայն դրանք թանկ են, քանի որ այդ հիվանդները պետք է ընդունեն դեղն ամեն օր՝ ողջ կյանքի ընթացքում: Երբ այցելում ենք Զայաստան, միշտ մեզ հետ բերում ենք դեղորայք, հատկապես՝ շաքարախտի

համար նախատեսված ֆրանսիական դեղամիջոցներ, որպեսզի գուցե 1-2 ամսով աջակցե՞ք հիվանդներին: Ֆրանսիական «Մետֆորմին»-ի ազդեցությունն ակնհայտ է. հիվանդները շատ արագ զգում են դրական փոփոխություն եւ նշում են, որ հայկական «Մետֆորմին»-ի համեմատ իրենց ինքնազգացողությունը զգալիորեն բարելավվում է: Նշեմ մի դրական փաստ. Զայաստանում շաքարախտով հիվանդների տոկոսային ցուցանիշը համեմատաբար ցածր է, քան որոշ եվրոպական երկրներում: Հնարավոր է, որ դա պայմանավորված է ավելի բնական սննդակարգով եւ տեղական հումքի օգտագործմամբ:

Իմ այս բացահայտման նպատակը մարդկանց տեղեկացնելն է հայկական արտադրության «Մետֆորմին»-ի բաղադրության անհամապատասխանության մասին: Հատկապես շաքարախտով հիվանդները, որոնք ֆինանսապես դժվար վիճակում են եւ ստիպված են օգտվել կառավարության տրամադրած անվճար «Մետֆորմին»-ից, պետք է տեղեկացված լինեն: Նրանք պետք է իմանան, որ նման դեղորայքով իրենց հիվանդությունը կարող է չկարգավորվել եւ նույնիսկ վատթարանալ: Զարգացնելով պետք է բարձրաձայնեն այս խնդիրը եւ պահանջեն ՀՀ կառավարությունից լուծում: Անհրաժեշտության դեպքում կարելի է նաեւ դատական գործընթաց սկսել այն դեղագործական ընկերության դեմ, որն արտադրում է դեղը՝ նշված խախտումներով: Եթե այս հարցով քրեական գործ հարուցելու ներկայացնել փաստաթղթերը՝ ֆրանսերեն թևերի անկողնի վրա կարող եւ հայերեն թարգմանությունը:

Ներկայացնում եմ ֆրանսիական լաբորատորիայի հետազոտության եզրակացությունը՝ հայերեն թարգմանությամբ:

Բուժաստատություն  
Փարիզի համալսարանական հիվանդանոց Hôpital Lariboisière -Hôpital Universitaire  
Լաբորատորիայի պաշտոնական տվյալներ  
Hôpital Lariboisière - Hôpital Universitaire AP-HP  
Laboratoire - Service de Toxicologie Biologique  
Adresse : 2 rue Ambroise Paré, 75010 Paris, France  
Լաբորատորիայի համալսարանական հիվանդանոց  
Լաբորատորիա - Կենսաբանական տոբեթիկոլոգիայի ծառայություն  
Հասցե՝ Ֆրանսիա, Փարիզ 75010, Ամբրուազ Պարե փողոց 2  
Պատասխանատու՝ պրոֆեսոր Պասկալ Հ. (Professeur Pascal H.)  
Եզրակացություն. Ընդհանուր առմամբ, արտասահմանյան ծագման դեղամիջոցի տուփը, որը տրամադրվել է դոկտոր ժ. Մ. Հ. Էբերյանի կողմից, իրականում պարունակում է «Մետֆորմին», ինչպես նշված է փաթեթավորման վրա: Սակայն ակտիվ դեղագործական նյութի պարունակությունը կազմում է 0,5 գ (500 մգ)՝ մեկ հաբի հաշվով, ինչը 50 %-ով պակաս է փաթեթավորման վրա նշված դեղաչափից: Այլ անօրգանական ակտիվ նյութ չի հայտնաբերվել: Էքսցիպիենտ հանդիսացող հնարավոր անօրգանական միացությունները չեն նույնականացվել եւ քանակապես չեն որոշվել: 16 դեկտեմբերի 2025թ., պրոֆեսոր Պասկալ Հ.:

Ժան-Միշել Գոլիանսեն Էբերյանը, բժիշկ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ «Հայ-մեր» բժշկական մարդասիրական ընկերության նախագահ

«Կ փորձենք, կստացվի՝ կստացվի», ամեն դեպքում, մենք վստահ ենք մեր ուժերի վրա: Ես վստահ եմ մեր ժողովրդի բանականության, խոհեմության վրա, իմաստության վրա: Որոշողը լինելու է ՀՀ քաղաքացին, մեզ ընտրողը Նա է, այլ ոչ թե Նեղ շրջանակները, էլիտաներն ու օլիգարխները: Մենք վստահ ենք, որ մեզ քաղաքացին ձայն է տալու, մենք առաջ ենք քաշում միջին խավի խնդիրները: Հանրությունն իր գնահատականը տալիս է ընտրությունների միջոցով»,- հունիսի 7-ին Նշանակված խորհրդարանական ընտրություններին իրենց մասնակցությունն այսպես են հիմնավորում այն բազմաթիվ կուսակցությունների ղեկավարները, որոնք գիտեն, որ ընտրություններում անցողիկ շեմը հաղթահարելու ոչ մի հնարավորություն չունեն: Բոլոր նրանց, ովքեր ասում են, որ իրենք մասնակցում են ընդդիմադիր ընտրազանգվածից ձայներ փախցնելու՝ ընդդիմադիր ընտրազանգվածի ձայները փոշիացնելու իշխանության պատվերի շրջանակներում, պատասխանում են, որ փոշիացնելու մասին խոսողները ճիշտ կանեն՝ իրենց վրայի փոշին մաքրեն:

Հետեւելով նրանց խորհրդին եւ մաքրելով մեր վրայի փոշին, այնուամենայնիվ, փորձենք հասկանալ, թե ինչու են այդ փոքր եւ աննշան կուսակցություններն ակտիվանում ընտրությունների նախաշեմին, ինչու է հենց իշխանությանը ձեռնտու նրանց մասնակցությունն ընտրություններին, եւ ինչ խնդիր են նրանք լուծում իրենց մասնակցությամբ:

Ընտրություններին մասնակցությունը կապված է ֆինանսական ծախսերի հետ. հենց միայն ընտրագրավը յուրաքանչյուր մասնակցի համար կազմում է 10 միլիոն դրամ: Պաշտոնապես ոչ մի տեղ չաշխատող եւ պաշտոնական որեւէ եկամուտ չունեցող կուսակցության ղեկավարների համար դա պետք է որ մեծ թիվ լինի: Գումարած ընտրական պրոցեսի հետ կապված այլ ծախսեր՝ գովազդ, այցելություններ եւ հանդիպումներ մարզերում, ընտրական շտաբներ եւ այլ ծախսեր:

Եթե նրանց հարցնելու լինես, թե որտեղից այդ գումարը, միաբերան կպատասխանեն, որ դա արվում է անդամավճարներից գոյացած գումարներով: Կուսակցությունները, որոնք հաճախ կազմված են մեկ կամ լավագույն դեպքում մի քանի մարդկանցից, մուծում են միլիոնավոր դրամների անդամավճարներ, որն էլ նրանք սիրահոծար վճարում են պետքույց: Իրականությունը բոլորովին այլ է. կուսակցությունը դրանց տերերի համար բիզնես է, քաղաքական բիզնես, որն ապահովում է եկամուտ, հատկապես՝ ընտրություններին մասնակցելու միջոցով:

Հայաստանի ընտրական պատմությունը ցույց է տալիս, որ փոքր, աննշան կուսակցությունների մասնակցությամբ շահագրգռված է բացառապես իշխանությունը: Վերցնենք թեկուզ 2021 թվականի խորհրդարանական ընտրությունները. դրանց մասնակցեցին 24 կուսակցություն եւ դաշինք, բայց խորհրդարան անցան միայն երեքը՝ «Զաղաքացիական պայմանագիրը», «Հայաստան» եւ «Պատիվ ունեն» դաշինքները: Այս երեք կուսակցությունները միասին ստացել էին ընտրողների ձայների 80 տոկոսը, իսկ մնացած 21 կուսակցություններն իրար հետ՝ 20 տոկոսը: Ո՞վ օգտվեց այդ 20 տոկոսից, իհարկե, «Զաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Ի՞նչ իրավիճակ կլիներ խորհրդարանում, եթե ընդդիմությունն ունենար ոչ թե 27 տոկոս, այլ՝ 47, եթե ընդդիմության եւ իշխանության ստացած մանդատների տարբերությունը լիներ 5-6 եւ ոչ թե 30: Բոլոր այդ կուսակցությունները հանդես են գալիս որպես իշխանությանն այլընտրանք, եւ հասարակության մի մասը, կամ անձնական, կամ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, նրանց ձայն է տալիս, արդյունքում ստացվում է, որ իրենք ձայն են տվել իշխանությանը, քվեարկում են ոչ իշխանության օգտին՝ մանդատ է ստանում իշխանությունը:

Իշխանությունը, տիրապետելով հսկայական ֆինանսական եւ վարչական ռեսուրս, կարողանում է

շահագրգռել այդ կուսակցություններին կամ դրանց սեփականատերերին՝ մասնակցելու ընտրություններին: Մի պահ պատկերացրեք, որ իշխանության հանձնարարությամբ որեւէ գործարար հանդիպման առաջարկ է անում նման կուսակցության սեփականատիրոջը՝ նախագահին, հանդիպման ժամանակ գործարարը խոսք է բացում կուսակցության ընտրություններին մասնակցելու մասին: «Ինչ է՝ ձեր նման կարեւոր եւ շատ հարգված մարդը մի՞թե չպետք է մասնակցի ընտրություններին»,- ասում է գործարարը, շոյված նման խոսքերից՝ կուսակցության սեփականատերը պատասխանում է. «Մենք էլ ենք մտածում մասնակցության մասին, բայց դրա համար փող է պետք, որը չկա»: «Եթե խնդիրը միայն փողն է, ես այդ հարցը կլուծեմ, չի կարելի թույլ տալ, որ միայն փողի բացակայության պատճառով ձեր նման ազգային, հայրենասեր, սկզբունքային մարդիկ չկարողանան մասնակցել ընտրություններին, հասարակությունը գրկված լինի ձեզ ընտրելու հնարավորությունից եւ ստիպված՝ կամ ընտրությանը չմասնակցի, կամ գնա, ձայն տա անարժաններին»: Պայմանավորվում են գումարի չափի եւ վճարումների ժամանակացույցի

տրամաբանություն՝ ընտրողն է որոշում, թե ով է առաջատար, ով՝ հետնապահ, մինչեւ ընտրություն չլինի, ինչպես որոշես, թե ով որքան հանրային աջակցություն ունի, ով է իրական ընդդիմադիր, ով՝ իշխանության պատվերով ձայն գողացող: Դրա համար կան մի քանի պարզ չափորոշիչներ. առաջինը խորհրդարանական ընտրություններից առաջ տեղի են ունեցել այլ տեղական ընտրություններ, այդ ուժերը մասնակցել են այդ ընտրություններին եւ ի՞նչ արդյունք են արձանագրել: Եթե նրանք ունեն հանրա-

ԸՆՏՐՈՒՄՆԵՐ



## ԻՆՉՊԵՍ ՏԱՐԲԵՐԵԼ ԻՐԱԿԱՆԸ ԿԵՂՄԻՑ

շուրջ, եւ գործարքը կայանում է: Երկու կողմն էլ գոհ է. գործարարը կատարեց իշխանության հանձնարարությունը եւ դրա դիմաց կատարեց ընտրություններն ու կկարողանա հետ բերել իր կողմից ներդրված գումարը՝ մի բան էլ ավել, կուսակցության սեփականատերը գոհ է, քանի որ կկարողանա փող աշխատել. տրված գումարի մի մասը, հնարավորինս քիչ մասը կծախսի ընտրական պրոցեսի կազմակերպման վրա, մնացածն իր մաքուր շահույթն է: Կան նաեւ այլ մեխանիզմներ, բայց կարեւորը դա չէ:

Ինչպես տարբերել՝ ով է ծառայում իշխանությանը, ով՝ ոչ, ով է ինքնուրույն, ով է կառավարվում, չէ՞ որ այդ կուսակցությունների ղեկավարների ասածների մեջ կա

յին աջակցություն, ապա կարող են կազմակերպել հազար, 2 հազար կամ 3 հազար հոգանոց որեւէ միջոցառում, հանրահավաք, հանդիպում սեփական աջակիցների հետ: Եթե կուսակցությունը մասնակցել է որեւէ տեղական ընտրության եւ նույնիսկ 500 ձայն չի ստացել, եթե չի կարողանում նույնիսկ 500 մարդ մի տեղ հավաքել եւ կուսակցական միջոցառում կազմակերպել, ինչպես կարող է խոսել հանրային աջակցության մասին: Սրանք բաներ են, որոնց մասին մինչեւ ընտրությունները իմաստ ունի անընդհատ հիշեցնել, քանի որ չի կարելի թույլ տալ, որ 100 հազարավոր մարդիկ գոհ դառնան մի քանի բիզնես շահերի, իսկ երկիրը նմանների պատճառով մնա գործող ռեժիմի տիրապետության տակ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Վ աղարշապատի ավագանու «Հաղթանակ» խմբակցության ղեկավար Սեւակ Խաչատրյանն օրեր առաջ հայտնել էր, որ բռնաճնշումներ են սկսվել Վաղարշապատի ընդդիմադիր հայացքներ ունեցող տարբեր անձանց նկատմամբ: Ավելի ուշ Զննչական կոմիտեից հայտնեցին, որ «Հաղթանակ» դաշինքի անդամները եւ աջակիցները «խոչընդոտել են մի շարք անձանց ընտրական իրավունքի ազատ իրականացմանը», մեղադրանք է առաջադրվել, եւ 6 անձ ձերբակալվել է՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու նպատակով դատարան ներկայացնելու համար: Այնուհետեւ իրապարակվեցին ձայնագրություններ, իբրեւ թե այդ անձանց միջեւ խոսակցություններ են եղել, որտեղ լսվում է, թե ինչպես են, օրինակ, «քֆուր դուում» Սեւակ Խաչատրյանին չընտրելու համար: Զայնագրություններից չէր հասկացվում, թե որն է այդտեղ կրիմինալը, բայց մարդկանց վրա դրանք վատ տպավորություն էին թողնում:

## ՆԱՅԵԼ ԵՆ՝ ԿԱՅԱՑԱԾ ԹԻՄ, ՈՐ ԲՎԵ ՌԻՆԻ, ԾՈՐՁՈՒՄ ԵՆ ՊԱՌԱՎՏՈՒՄ ՄՏՅՆԵԼ

**Սեւակ Խաչատրյանը** «Հրապարակ»-ի հետ զրույցում երեկ ասաց՝ իրենց 7 աջակիցներից մեկի նկատմամբ խափանման միջոց ընդհանրապես չի ընտրվել, մյուս 6-ն էլ տնային կալանքի տակ են՝ գրավի համակցությամբ:

«Քրեական վարույթում 14 հոգի է, բայց 7-ին էին ներկայացրել: Մեղադրանքում նշված է. օգտագործելով իրենց հեղինակությունը՝ մարդկանց դրդել են գնալ քվեարկել, բա եթե ավագանու թեկնածուն իր հեղինակությունը չպետք է օգտագործի, ինչն է օգտագործելու: Եղ նույն հոդվածով կարելի է բոլորին ձերբակալել, եթե ընտրության հետ կապ ունի»,- ասաց նա: Խաչատրյանը նաեւ նշեց՝ ամեն վայրկյան սպասում է, որ իրեն էլ կարող են ձերբակալել:

**- Անդրադառնա՞նք 2026-ի ընտրություններին, այս իրադարձությունները շատերը կապում են առաջիկա ընտրությունների հետ: Դուք, ձեր կուսակցությունը**

**քննարկումներ ունենում եք ընդդիմության տարբեր ուժերի հետ, ինչպե՞ս եք մասնակցելու ընտրություններին, ի՞նչ ձեռաչափով:**

- Այո, քննարկումներ կան, բայց այս պահին ոչինչ չեմ կարող ասել, երբ կունկրետություն լինի, կասեմք:

**- Բանակցությունները դժբերի հետ են:**

- Այս պահին այլ ընդդիմադիրների հետ շփումներ կան, բայց բոլորը գիտեն՝ ես նախագահ Զոհարյանի հետ եմ: Բայց այս պահին, երբ կունկրետություն չկա, ճիշտ չէ ասելը:

**- Այնուամենայնիվ խոսում ես, որ Դուք ՀՀ-ի, Ռ. Զոհարյանի թիմակիցների հետ եք մասնակցելու, Ձեր հակվածությունն ինչպիսի՞ն է:**

- Ես հակված եմ, որ ընտրություններին աջակցելու եմ նախագահ Զոհարյանի գլխավորած թիմին:

**- Իշխանությունն ամբողջ թափով ներգրավել է իրավապահ համակարգը, կանխատեսվում է, որ առաջիկայում նոր քաղաքա-**

**կան-քրեական վարույթներ կլինեն...**

- Հիմա Վաղարշապատի օրինակի փաստը կա, նայել են՝ կայացած թիմ, որ քվե ունի Վաղարշապատ համայնքում, փորձում են պառակտում մտցնել, մարդկանց ճնշել, բայց չեմ կարծում, թե դա օգուտ է տալիս, ամեն դեպքում կլինեն մարդիկ, որ, այսպես ասած, կվախենան, կփորձեն ավելի պասիվ լինել: Բայց, ընդհանուր առմամբ, կարծում եմ՝ ազդեցություն չի ունենա:

**- Իշխանությունը վերարտադրվելու ինքնավստահությունն ունի, ընդդիմությունն էլ վստահ է, որ դա չի լինելու, դրն է Ձեր կանխատեսումը:**

- Իմ կարծիքով, եթե խոշոր ընդդիմադիր ուժեր ձեւավորվեն, յուրաքանչյուրն աշխատի իր ընտրազանգվածի հետ, բնականաբար, հասնելու ենք ցանկալի արդյունքի: Ցանկալի արդյունքը Նիկոլ Փաշինյանի հեռացումն է:



Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

«Յրապարակի» գրուցակիցը «Չարթունք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սեւակ Յակոբյանն է:



- Հայաստանում նախընտրական շրջանը կարելի է բացված համարել. քաղաքական ուժերն աստիճանաբար հայտարարում են խորհրդարանական ընտրություններին մասնակցելու մտադրության, ձեռնարկում են հայաստանյան զարգացումներին:

- Ի տարբերություն ընդդիմության գանազան թեւերին, իշխանություններն իրենց նախընտրական շրջանի նախապատրաստումը բնավ չեն դադարել վերջին՝ 2021-ի ընտրություններից ի վեր, որն արտացոլվում էր իրենց պոպուլիզմին մոտիկից առնչվող յուրաքանչյուր խոսքի եւ գործի մեջ: Իշխանություն լինելով հանդերձ՝ տարօրինակ կերպով պահելով ընդդիմության վարքագիծ: «Նախկիններ-նորեր»՝ իրենց մշտական հանգերգով ու շուտասեղանով, ոչ բարով փռված սաֆալտով, մանկապարտեզներով, երեսակայածին ատոմակայաններ եւ մետրոյի նոր կայարաններ «սարքելով», պարզեւստեղծներով, մրցանակաբաշխություններով, զինվորական ծառայության ժամկետը կրճատելով, ճշտված ժամանակից առաջ օրենսդրական փոփոխություններ

ՀՀ «Միասնության թեւեր» դաշինք: Իր կողմից Փաշինյանը, ընդդիմության ձայները փոշիացնելու միտումով, ընդդիմադիր մանր-մուկը կուսակցություններին խայծ տալու համար մեջտեղ նետեց ընտրական շեմը շրջանցելու տոկոսի նվազեցումը, 5 տոկոսից՝ 4-ի, նաեւ հեշտացնելով ԶԳ-ի արբանյակ «միանձնյա» կուսակցությունների գործը, ինչպես նաեւ՝ հենց ԶԳ-ինը: Հիմնահարցն այստեղ ընդդիմադիր փոքր կուսակցությունների հասունության ու հայրենասիրության գաղափարախոսությունն է, ըմբռնելով, որ իրենց մասնակցությունը կարող է ի վերջո սատարել իշխանությանը՝ իրենց ստացած ձայների փոշիացմամբ, ընդգրկվեն ավելի ուժեղ ընդդիմադիր դաշինքի մեջ կամ գոնե այս անգամ չմասնակցել ընտրություններին:

- Քաղաքական «գալա համերգի» գլխավոր հարցը, թերեւս, Փաշինյանի եւ նրա թիմի վերարտադրվել-չվերարտադրվելու հարցն է: Շարունակում են պայտի կալանքի տակ մնալ ընդդիմադիր գործիչներ, սրբազաններ, իշխանությունը մեծացնում է բռնաճնշումները: Որքանով է ինչպես կաստկանա գործող ռեժիմի «հակահայկական» արշավն այս փուլում:

վարչակազմի ակնհայտ սատարում, մասնավոր՝ Վենես ակնարկեց, որ Ադրբեջանի հետ խաղաղությունը պայմանավորված է նաեւ Փաշինյանի անձով:

- Ձեր նշած դեպքին նմանվող որեւէ հայտարարություն՝ ոչ արեւմտյան կողմից, այդ նույն՝ արեւմտյան կողմի սահմանամբ, պիտի կոչվեր տվյալ երկրի ներքին գործերին խառնվելու քայլ կամ միտում կամ անկախ երկրի ինքնիշխանությունը խաթարող հայտարարություն: Սակայն վերջին մի քանի տասնամյակներին այնպես է ստացվել, որ Արեւմուտքից եկած ցանկացած կապիկություն ընկալվի իբրեւ հալալ, իսկ ոչ արեւմտյան կողմից եկած որեւէ քայլ՝ հարամ... Ամեն դեպքում, այս եղածը եթե ոչ մի բանի պետք չէ վերագրել, ապա նվազագույնը կարող է հաստատել, թե ամենակարգից ով բերեց Նիկոլ Փաշինյանին եւ ինչ առաքելությամբ:

- Չուզահեռաբար դիսկուրս կա այն մասին, որ, այսպես կոչված, Միացյալ Եվրոպան, որն այսօր լուրջ հակասություններ ունի Թրամփի հետ, եւս մտադիր է նախընտրական շրջանում աջակցել Փաշինյանին. այդ նպատակով մայիսին ՀՀ-ԵՄ առաջին գագաթնաժողովն է կա-

վարչախմբի վերարտադրությունը խափանելու եւ հաջողելու համար:

- Պետք է չանեն այն, ինչ անում են: Այսինքն, նմանօրինակ օրհասական պահի, ցանկացած խելամիտ ու հայրենասեր կողմ, մի կողմ դնելով իր «ես»-ը, անձնուրաց նետվում է հայրենիքի փրկության գործին: Ավելի հստակ ասեմ՝ երբ ընդդիմությունը տարբեր խմբերով մասնակցում է ընտրություններին, այսինքն՝ իրեն համակիր կամ հակաիշխանական խմբերի ձայներ ստանալու համար ավելի շատ իրար հետ են մրցակցում, քան՝ Նիկոլի: Հայկական հիվանդ նկարագիրն արտացոլող ցավոտ եւ պարզունակ օրինակով ասեմ. երբ մեկը մի հաջող գազալցակայան բացի, մյուսը, փոխանակ այն ամբողջացնող մի բիզնես ընտրի ու դնի նրա մոտ, կգա, ճիշտ նույն ծառայությունը մատուցող մի գազալցակայան էլ ինքը կբացի՝ ճիշտ նրա կողքին: Երրորդը կանի նույնը... Այս մարդիկ չեն մտածում, որ նույնքան բնակչություն ունեցող եւ չաճող երկրի տվյալ ճանապարհով անցնող մեքենաների թիվը նույնն է, մինչ իրենք մրցակցում են նույն հաճախորդներին գրավելու համար: Հետեւաբար, եթե մեկ հոգին, լինելով սեփականատեր, շահ էր գրանցելու, հիմա երեքով վնասելու են: Ընդդիմության մոտ կա այն մետաֆորիկ խոսույթը, որ եթե 5+5-ը 11 չի անելու, ապա պետք է առանձին-առանձին գնալ ընտրություններ, եւ հետո, երբ մտնեն տվյալ քաղաքի ավագանին կամ ԱԺ, ապա ներսում գաղափարակից ով մտավ, ըստ իր ստացած տեղերի կբանակցի մյուսի հետ, եւ կգնան դաշինքի: Իմ կարծիքով, սա շատ պիտիտիվ եւ ինքնակենտրոն մտածելակերպ է, քանի որ այս կողմերից եւ ոչ մեկը չի մտածում, որ տեղական, թե համապետական ընտրություններին մասնակցում է լավագույն դեպքում ընտրողների շուրջ 50 տոկոսը: Մասցած 50-ը, որն ինչ-որ պատճառով իրավիճակն անհույս է համարում կամ անտարբեր է եւ կամ նեղացած ու հուսալքված՝ կողմերից մեկից, ընտրության օրը տանն է նստելու: Սակայն եթե չմասնակցող խումբը, որն ընդհանրապես իշխանականը չի լինի, տեսնի, թե հասարակության թշնամու դեմ միակամ մոտեցում է միասնական ոգի կա, ապա մեծ է հավանականությունը, որ այդ մասսան մասնակցի տվյալ ընտրություններին եւ անպայմանորեն համախմբված ընդդիմության կողքին՝ հանուն միասնական նպատակի: Ահա, այս տրամաբանությունն ու ժողովրդի հոգեբանական բազմերակը ճշգրիտ շոշափելու կարողությունն ու կամքն են, որ պակասում են մեր ընդդիմության մոտ:

# ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ ԵՎԱԾ ՑԱՆԿԱՑԱԾ ԿԱՊԻԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԱԼՎՈՒՄ Ե ԻԲԲԵՎ ՆԱԼԱԼ, ԻՍԿ ՈՉ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՎԱԾԸ՝ ՆԱՐԱՍ

կիրառելով, «Վարչաբեմերով» եւ այլն: Միևնույն ընդդիմությունը զբաղված է իրար դեմ ցեխարձակումներով, անհեթեթ քննարկումներով, ԱԺ-ի մեջ որպես գարդ ներկայությամբ, անհասանելի իմպիչմենտի ծրագրերով ու անիմաստ աղմուկ բարձրացնելով: Հիմա է, որ, այսպես կոչված, ընդդիմությունն սկսել է իր նախընտրական աշխատանքները: Արդեն պարզ է դառնում շուտով գոյանալիք դաշինքների կազմավորման ուրվագիծը: Այս պահին պարզ են «Մեր ձեռք» շարժման կամ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ընտրական ծրագիրն ու թեկնածուն, որ, սակայն, երանի թե մնար շարժում՝ փոխանակ այն նեղացնելու կուսակցության կաղապարի մեջ, իբրեւ շարժում կարողանար ներգրավել նաեւ այլ կուսակցությունների կամ տարբեր տեսակի միավորումների եւ խմբերի: Մյուս կողմից, արդեն հայտարարված է, որ «Մայր Հայաստան»-ը պիտի գործակցի «Բարգավաճ Հայաստան»-ի հետ, որին, եկթադրաբար, շուտով կմիանա ՀՅԴ-ն: Ըստ իս, նաեւ հավանական է, որ գոյանա

- Մարդկային պատմության մեջ նմանօրինակ որեւէ միահեծան դեկադար, երբ իր աթոռը վտանգված է տեսել, ընկել է նման հիստերիկ հոգեվիճակի հորձանուտի մեջ: Լիբանանյան դիպուկ ասացվածք կա՝ այս բանի հետ կապված, որ ասում է. «Ո՛վ գնացող, տգեղ արարքներդ շատացրու...»: Հետեւաբար, ինչքան մոտենանք հունիսի 7-ին, այնքան իշխանության գործելիք վատ արարքները պիտի շատանան, որի ստեղծած մթնոլորտը, ըստ պատմության դասական օրինակների, կարող է՝ ինչու չէ, հասցնել միևնույն քաղաքացիական բախումների՝ հրահրված նույն իշխանության կողմից: Իսկ վերջինիս դեպքում վարչապետը կարող է օգտվել իր սահմանադրական իրավունքից, արտակարգ իրավիճակ հայտարարել եւ անժամկետ դրությամբ առկախել ընտրությունները:

- Փետրվարի 9-ին Երեւան այցելած ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը բացեիքաց աջակցեց ՀՀ գործող վարչապետի թեկնածությանը գալիք ընտրություններում: Սա կարելի է համարել Թրամփի

յանալու, Երեւանը հյուրընկալելու Ե Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովը:

- Սա նշանակում է, որ, անկախ Ուկրաինայի շուրջ ունեցած իրենց տարակարծություններից, Կովկասի վերաբերյալ Ամերիկայի ու Եվրոպայի շահերը համընկնում են, մինչ Նիկոլ Փաշինյանը երկու կողմին էլ «սրտամոտ» մարդ է: Մնում է ավստ-սալ, սակայն, հայկական կողմի քաղաքական կարճատեսության եւ ստատիկության համար, որը երազում է կամ հավակնություն ունի Եվրոպական Միություն մուտք գործել եւ այդ ուղղությամբ իրենց խելքին հասու չափով շանքեր գործադրել, մինչ ԵՄ-ն՝ ինքը, գտնվում է կազմալուծման եզրին:

- Այն պայմաններում, երբ Փաշինյանը, ըստ էության, Եվրոպայի եւ Արեւմուտքի, ինչու չէ՝ նաեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի «սրտի թեկնածուն է», ինչ եզրակացություններ եւ քայլեր պետք է անեն ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած ընդդիմադիր ուժերը եւ ոչ միայն՝ գործող

# ՄԱՔՐՈՒՄ ԵՆՔ, ԵՏ ԵՆՔ ՆԱՅՈՒՄ՝ ԱՂԲԸ ԹՎՈՒՅԻՆ ՄԱՔՐՎԱԾ ՏԵՂԸ



Փետրվարի 12-ի համարում «Յրապարակ» օրաթերթը «Ինչի՞ն սպասել, որ աղն ու ավազն իրենց գործն անեն» փոքրիկ հոդվածով ուշադրություն էր իրաւորել, որ մեր բնակավայրերի փողոցներից ու մայրերից վերջապես հեռանում են ձյունուսառույցի վերջին ծվենները, եւ «արթնանում» է սառցադաշտերի դեմ պայքարի նպատակով ձմռանը կիրառված տարբեր գունեղանակների աղախառն ավազը: Առաջարկել էինք ձյունը հալվելուն պես ձեռնամուխ լինել ավազակույտերի մաքրմա-

նը: Չէ՞ որ ավազը խորթ է բնակավայրերի գեղագիտական տեսքին եւ անհարմարություններ է ստեղծում հետիոտնի համար, վնասում է նաեւ կոշիկների ներբանները, մեքենաների անվադողերը: Բացի այդ, ի տարբերություն աղի, ավազը չի հալվում, չի քայքայվում եւ չի անհետանում արեւի ու անձրեւի ազդեցությամբ: Այն ջրերի հետ ներթափանցում է ջրահեռացման համակարգեր, կուտակվում, խցանումներ է ստեղծում: Իսկ դրանց վերացումը պահանջում է ժամանակ, տեխնիկական միջոցներ, աշխատուժ եւ

լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Նկատելի, որ Լոռու մարզկենտրոն Վանաձորի Տիգրան Մեծի պողոտայում համայնքապետարանին ենթակա «Նեցուկ-հաշմանդամների զբաղվածություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցները սանիտարական մաքրման աշխատանքներ են իրականացնում: Մոտեցա մի երիտասարդ աշխատակցի: «Արդեն 5-6 օր է՝ սկսել ենք փողոցների ու մայրերի մաքրման աշխատանքները: Մի քանի խմբով ենք աշխատում: Փողոցներն ու մայրերը, գազոնները մաքրում ենք ոչ միայն աղբուղտե-

ղությունից, այլեւ ազատում ենք այսուայնտեղ կուտակված ավազից: Ավազը կտեղափոխենք եւ անհրաժեշտության դեպքում դարձյալ կօգտագործենք»,-տեղեկացրեց նա: Ապա ասաց. «Գիտեմ՝ լրագրող եք, մի խնդրանք ունեմ՝ այդ մասին էլ գրեք, հա՛մ: Տեսնում եք՝ ջանք ենք թափում, մաքրում ենք, ետ ենք նայում՝ անցորդը ծխախոտատուփը, ծխախոտի կոթունը կամ ցելոֆանե մի տոպրակ նետում է նոր մաքրված տեղը: Գրեք՝ Էդպես կարելի՞ է»: Իհարկե՞ չի կարելի: Կոչ ենք անում քաղաքացիներին՝ հարգել մեր փողոցները մաքրողների աշխատանքը, մի աղտոտեք ձեր միջավայրը:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Պատմական հետաքրքիր ֆիլմ էի ուզում դիտել, Յուրի Բուրյուկովի առաջարկեց թուրքական արտադրության «1453 թ. զավթում» երկտերիանոց ֆիլմը, որը նկարահանել է թուրք ռեժիսոր Ֆարուկ Ակսոյը: Վերնագիրն անմիջապես գրավեց ուշադրությունս: 1453-ը պարզապես թիվ չէ՝ դա քաղաքակրթական ճեղքում է, դա Կոստանդնուպոլսի անկումն է: Դա մի ամբողջ աշխարհակարգի ավարտն է:

Դիտեցի: Առաջարկում եմ՝ դուք էլ դիտեք: Բայց դիտեք ոչ թե այն դիտանկյունից, որով ֆիլմն է ուզում ձեզ ներկայացնել պատմությունը, այլ՝ ճշմարտության աչքերով:

Չի կարելի չընդունել՝ տեխնիկապես հզոր ֆիլմ է: Չափազանց նավերի կառուցումը, հսկայական թնդանոթների ձուլումը, դրանց տեղափոխումը՝ հարյուրավոր եզների ու հազարավոր մարդկանց ուժերով, պաշարման զանգվածային տեսարանները, նկարահանված են վարպետորեն: Դերասանական խաղը համոզիչ է: Միջավայրի պատմական կոլորիտը մանրակրկիտ վերարտադրված է: Ամեն ինչ արված է այնպես, որ հանդիսատեսը հիանա, հավատա, զարմանա, սթախանա:

Բայց պատմական փաստերին լավատեսական դիտողն անմիջապես

նում է երեք օր անսահմանափակ թալան՝ քաղաքը գրավելուց հետո: Տներ, գույք, ոսկի, զանձեր, տղամարդիկ, կանայք, երեխաներ: Ամեն ինչ: Պատմությունն է դա փաստում, ֆիլմում դա բացակայում է:

Մեծ գրող Ստեֆան Յվայգը, իր «Մարդկության աստեղային ժամերը» գրքում անդրադառնալով բյուզանդական մայրաքաղաքի պաշարմանն ու կործանմանը, Մեհմեդին բնութագրում է առանց մեղմացումների. «Մուլագար, տաքարյուն եւ նենգամիտ, ուսյալ մարդ է եւ սիրում է արվեստ, բայց արյունը թափում է ջրի պես»: Այլ տեղում գրում է, որ Նրա մեջ միավորվում էին «անխոնջ աշխատավորը, անվեհեր զինվորը եւ երկերեսանի դիվանագետը»: Սա ոչ թե վիրավորանք է, այլ՝ գրական-պատմական գնահատական: Յվայգը չի գուճազարդում, նա ցույց է տալիս հակասական ամբողջությունը: Ֆիլմում այդ ամբողջը չկա, մասնատված, անդամահատված է: Մնացել է միայն փայլը՝ հումանիտական դիմակը:

Պաշարման ամենաազդեցիկ դրվագներից մեկը՝ նավերի տեղափոխումը ցամաքով դեպի Ռսկեդջյուր, ներկայացված է որպես ռազմական հանձնարի աննախադեպ դրսեւորում: Այո, դա ռազմավարական բացառիկ քայլ էր: Բայց

հայտնի է, որ տաճարում փրկության համար թաքնված հազարավոր քրիստոնյաներ կրակի են մատնվել եւ ոչ թե հումանիտ զորավարի աջն են համբուրել: Չավթման արդեն հաջորդ օրը տաճարը մաքրվում է քրիստոնեական խորհրդանիշներից, խաչը տապալվում է, սրբապատկերները ծածկվում են: Յվայգը գրում է՝ խաչի անկումը ցնցեց Եվրոպան: Դա պարզապես կրոնախելություն չէր: Դա քաղաքակրթական խորհրդանիշի կործանում էր: Իսկ ինչո՞ւ են բաց թողնվել ամենամահերեքի մանրամասները: Ինչո՞ւ չեն հիշատակվում եռօրյա թալանի խոստումը, իրագործված թալանը, մշակութային ավերածությունները, զանգվածային ստրկացումը: Ինչո՞ւ է արյունալի նվաճումը ներկայացվում որպես բարձր բարոյական առաքելություն:

Ուրբանի դրվագը եւս ուշագրավ է: Յուրի Բուրյուկովը, որը հզոր թնդանոթներ ձուլեց թուրքերի համար, պատմության մեջ հայտնի է որպես վարձկան: Ֆիլմում նրա կերպարը զուգորդվում է զգացմունքային պատմությամբ՝ Եվրոպացիների կողմից ավերված գյուղ, վրեժ, անձնական ողբերգություն: Բայց սա արդեն գեղարվեստական արդարացում է: Իրականում, դա քաղաքա-

մեկը շահում է այդ բառսից: Բայց պատմությունը չի կարելի վերաշարադրել կեղծիքով: Ոչ մեկը չի ասում՝ նման ֆիլմեր մի նկարեք ու մի դիտեք: Բայց դիտեք քննադատաբար, հիշեք պատմությունը եւ ուղեղի պրիզմայով լուսավորեք պատմական խաբուսիկ անցյալը: Երբ միլիոնավոր մարդիկ դիտում են նման ֆիլմ եւ պատմությունն ընկալում հենց այդ ձևով, ձեւավորվում է նոր պատկերացում, թե նվաճումը եղել է մարդասիրություն, թե թալանը եղել է կարգուկանոն, թե ուժը եղել է բարոյական առաքինություն եւ առաքելություն: Ամաչելու ոչինչ չկա

ՄԻՍԻ



**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ «ԶԱՎԹՈՒՄ» ԾՈՐՁ. ԻՆՉ Ե ԱՍՈՒՄ «1453 Թ. ԶԱՎԹՈՒՄ» ՖԻԼՄԸ**

զգում է փաստերի խեղաթյուրումը, երբ բարձր որակի կինեմատոգրաֆիան ծառայեցվում է ընտրովի պատմությանը՝ խեղաթյուրելով իրականությունը: Ֆիլմի կենտրոնում նորընծա սուլթան Մեհմեդ II-ն է: Նրան ներկայացնում են որպես հեռատես, խոհեմ, հանդուրժող, գրեթե մարդասեր առաջնորդ: Սակայն պատմական աղբյուրներն այլ բան են փաստում: Գահ բարձրանալուն պես նա հրամայում է լուսաբանում խեղդել իր անչափափա տղերքը՝ վերացնելով իր գահի հնարավոր մրցակցին: Սպանվածի հետեւից վերացվում է նաեւ մարդասպանը՝ հանցանքի հետքը կոծկելու նպատակով: Սա ոչ թե լեգենդ է, այլ արձանագրված փաստ: Ֆիլմում դրա մասին՝ բար լուրջությամբ: Վճռական գրոհից առաջ սուլթանն իր բանակին խոստա-

պատմությունը պահանջում է նաեւ հիշեցնել դրա հետեւանքը՝ քաղաքի կործանումը, եռօրյա թալանը, ավերածությունները, մարդկային ողբերգությունը: Պատմիչները մանրամասն նկարագրել են, թե ինչպես էին փշուր-փշուր արվում հունական քանդակները, տաճարները, ինչպես էին կրակի մատնվում գրեթե ինչպես էին սրբապատկերները պղծվում, ինչպես էին մարդիկ վաճառվում ստրկաշուկաներում: Այդ դրվագները ֆիլմում չեն գտնի:

Փոխարենը տեսնում ենք սուլթանի հանդիսավոր մուտքը Սուրբ Սոֆիայի տաճար: Ահաբեկված մարդիկ լուռ սպասում են: Եվ ահա՝ մարդասեր միապետի ժայտը, խաղաղության խոսքեր, գրկին երեխա, հանդուրժողականության կոչ: Կադր, որը պիտի հուզի: Մինչդեռ

կան ու ֆինանսական ընտրություն էր: Պատմությունը չի պահանջում հուզական լեգենդ՝ բացատրելու համար ռազմական տեխնոլոգիայի վաճառքը: 1453 թվականը նաեւ Եվրոպական բառսի հետեւանք էր: Պառակտված քրիստոնեական աշխարհ, փոխադարձ անվստահություն, ներքին հակասություններ, օգնության ուշացում, խոստումների անկատարություն: Երբ քաղաքակրթական բեւեռները զբաղված են իրար կոկորդ կրծելով, երրորդ ուժը գործում է արագ եւ վճռական:

Այսօր աշխարհը կրկին պառակտված է: Պատերազմներ, հակամարտություններ, ներքին ճգնաժամեր: Պատմությունը կարծես հիշեցնում է նույն օրինաչափությունը՝ երբ ուժերը միմյանց սպառնում են, իրար հաշմում ու հոշոտում, ինչ-որ

ճշմարտությունը բարձրաձայնելու մեջ: Ամաչել պետք է պատմությունը գեղեցկացնելուց: Եթե մենք լուռ ընդունում ենք ընտրովի ներկայացված պատմությունը, վաղը կարթնանանք արդեն ձեւափոխված հիշողությամբ: Իսկ հիշողությունը երբ ձեւափոխվում է, դառնում է քաղաքական գործիք:

Պատմությունը կարելի է նկարահանել, բայց չի կարելի այն մաքրել արյունից, եթե այդ արյունը եղել է: Չի կարելի խաչի անկումը ներկայացնել որպես խաղաղ միավորում: Չի կարելի նվաճումն անվանել փրկություն: Դիտեք ֆիլմը: Բայց մի՞ թողեք, որ ֆիլմը ձեզ ճնշի: Պատմությունը որքան էլ փորձեն զլխիվայր շրջել, այն զլխիվայր չի շրջվում: 1453 թվականը հնարավոր չէ վերանայել: Այն մնում է այն, ինչ եղել է:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

**ՅՈՒՂԱՆԵՐԿ՝ ԺԱՆԳՈՏՎԱԾ ՄԵՏԱՂԻ ՈՒ ՆԻՆ ՊԱՐՈՒՅՐՆԵՐԻ ՆԵՏ**

Մարտիրոս Բաղայանի արվեստը գեղանկարչության, բեմանկարչության եւ նյութի իմաստասիրական իմաստավորման սահմանագծին գտնվող արվեստ է: Հայաստանի վաստակավոր նկարիչ եւ երեւանի պետական տիկնիկային թատրոնի գլխավոր նկարիչ Մարտիրոս Բաղայանն ինքնատիպ ոճ ունի, որտեղ առկա են բարդ տարածական օբյեկտներ, որտեղ յուզաները գոյակցում է ժանգոտած մետաղի, հին պարույրների եւ իրենց դարն ապրած վրձինների հետ: Նկարիչը ծնվել է 1952 թվականին՝ Գարդմանքի Բանանց գյուղում: Դասական կրթություն է ստացել Երեւանում՝ նախ Թերլեմեզյանի անվան ուսումնարանում, հետո՝ Գեղարվեստա-թատերական ինստիտուտում: Սակայն նրա ճանաչելի ոճը ծավալուն կոլաժն է՝ ձեւավորված ոչ այնքան ակա-

դեմիական հանդիսատեսի, որքան հանգամանքների բերմամբ:

90-ականների սկիզբը Հայաստանում նկարիչների համար ծանր ժամանակներ էին: Չկային նյութեր՝ ստեղծագործելու համար: Միջոցների սղության պատճառով նա սկսել է աշխատել՝ բառացիորեն ամեն ինչ օգտագործելով, ինչպես մի առիթով պատմել է Հասմիկ Շամցյանի հետ զրույցում: Արդյունքում՝ այն, ինչ ստեղծվել է հարկադրանքի բերումով, վերածել է գեղարվեստական մեթոդի: Իր աշխատանքների համար Մարտիրոս Բաղայանը կիրառում է բոլոր այն առարկաները, որոնք, այսպես ասած, «անցյալ ունեն»: Եթե դրանք վրձիններ են, որոնցից հավաքում է ինքնադիմանկար, ապա դրանք պետք է լինեն հին ու արդեն «իրենց դարն ապրած»: Բաղայանի տեխնիկան դժվար է դասակարգե-

լը: Երբ մի անգամ հարցրել են, թե փաստաթղթեր լրացնելիս ինչ է գրել մասնագիտության բաժնում՝ նկարիչ, թե քանդակագործ, ասել է. «Միավորեք դրանք»: Նրա գործերը դուրս են գալիս կտավի երկչափ համակարգից: Դա այն է, ինչ երվանդ Քոչարն անվանում էր «տարածական գեղանկարչություն»: Բաղայանը ոչ միայն սոսնձում է առարկաներ, ինչպես ենթադրվում է «կոլաժ» եզրույթը բառացի թարգմանելիս, այլեւ ձեւավորում է ձեւ ու նկարում է օբյեկտների վրա: Իմ աշխատանքներում ինձ անհրաժեշտ են ծավալ, եռաչափություն: Դուք կասեք, թե կտավի վրա էլ կարելի է ստանալ խորություն, հեռապատկեր, սակայն դա ինձ չի համոզում», բացատրում է վարպետը: Նրա մտածողության մեջ առանձնահատուկ տեղ ունի երաժշտությունը, իսկ առիասարակ՝ նա մի նկարիչ



է, որը չի բաժանում կյանքն ու ստեղծագործական աշխատանքը եւ մտածում է նկարներով, ու ցանկացած իրադարձություն՝ լինի դա հանդիպում կամ էմոցիա, նրա մտակերպությունը դառնում է վիզուալ պատկեր:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



### ԱՐԴԵՆ ԵՐԳՈՒՄ Ա...

ՔՊ-ն պատրաստ չէր իրադարձությունների կտրուկ շրջադարձի: Այն, որ ժողովուրդը միանշանակ ու միաբերան մերժում է ԶԳ-ական իշխանությանը, հայտնի էր ավելի շուտ, բայց որ ընդդիմությունն արագ կկողմնորոշվեր եւ կգնար ուժերի խոշորացման ուղղությամբ, անսպասելի էր քաղաքական խարդավանքների վարպետ ԶԳ-շնիկների համար: ԶԳ-ական բարոզամեթենան ակնհայտ «սրտներ» է տալիս, երեկվա ասածը մոռացած՝ այսօր ուրիշ բան է ասում, մի ԶԳ-շնիկ՝ մի բան, մյուսը՝ մի ուրիշ բան, իրար են խառնել արտաքին քաղաքական բոլոր հնարավոր վեկտորները: Իսկ ամենածանր վիճակն էլ ստեղծվել է իրավապահ ոլորտում, որ մինչ այս համարվում էր ԶԳ-ի քաղաքական հրետանին: Դատախազությունն այստեղից-այնտեղից գործեր է «կպցնում», կա-

թիչ թե շատ քաղաքական խնդիրների վրա կենտրոնանալու: «Խաղաղության խաչմերուկ», «տարանցիկ երկիր», TRIP, «սահմանազատում», «սահմանագծում», «պաշտպանության ոլորտի բարեփոխումներ», «օտարերկրյա ներդրումներ», «աշխատատեղեր», «IT հրաշքեր», «տիեզերագնացություն», «հայրենադարձություն», «ազգաբնակչության թվի կրկնակի աճ», «թոշակների բարձրացում», «ասֆալտ-ճանապարհաշինություն»... Ամեն ինչ տապալել է: Ամենահասարակ բանը վերցնենք՝ աշխատատեղերը: Իր իշխանության առաջին օրից մինչ օրս աշխատատեղեր է բացել միայն հնդկների, աֆղանցիների, պակիստանցիների, ռուս եւ ուկրաինացի ռեզիդենտների համար: ԶԳ-ն մի ոչ պակաս դրոմ էլ ԱԺ-ում ունի: Երկու օր առաջ նա էր հայտարարել, որ իրենք Հայաստանը վերածել են մի երկրի, ուր այլ երկրներից մարդիկ «խոպան» են գալիս: Առաջնորդի սրտից արյուն է կաթում, հասկանում ես, իսկ սա, տեսեք, ինչի վրա է ուրախացել:

Ինչեւէ, վերը թվարկված փուլերը սկսել են պայթել լուսի արագությամբ, իսկ առջեւում ընտրություններն են: Ի՞նչ են ասելու ընտրողին, ինչպես են նայելու նրա աչքերի մեջ, ի՞նչ են 2021-ին նրան տված խոստումները: Կկարողանան գոնե մի մարդավարի հանդիպում կազմակերպել ընտրողի հետ, խոսել, բացատրել անհաջողությունների պատճառները: Խոսքը ուսիկաններով...

րով, «700 հազար դրամ» աշխատավարձ ստացող վարժապետներով ու սուտի մտավորականներով հանդիպումների մասին չէ: Ես նկատի ունեմ այն պարզ ու անմիջական հանդիպումները, որ այս օրերին կազմակերպում են ընդդիմադիր ուժերն ու հանրությանը հնարավորություն տալիս ազատ արտահայտվելու:

Որքան մարդ է այսօր ԶԳ-ում լուռ դատապարտում իր առաջնորդի հակաեկեղեցական արշավը... Հաշվե՛լ են: Կեղծ ու պիղծ պատարագները հրաշալի առիթ էին, որ իրենք իրենց հաշվեն: Թիվը՝ դեռ մի կողմ... Բա դրանց բովանդակության ու «խորքի» մասին ինչ ասեմ: Թե բա՞ կաթողիկոսի անունը գեղեցիկ ենք պատարագից: Այդքան բան: Իսկ որ հանրության «սրտից» ամեն կեղծ պատարագի գեղջվում էր ուստիկանական գնդերով շրջող վարչապետի անունը, դա ոչինչ, էն, որ ամեն պղծության առիթով տասնյակներով ԶԳ-շնիկներ էին խայտառակվում, ոչինչ: Էն, որ ամեն մի հակաեկեղեցական արշավից հետո հայ էր թշնամանում հայի հետ, ոչինչ: Էն, որ այդ ամենի արդյունքում այսօր մի դյուժին տիրադավ հոգեւորականներ ունենք, ոչինչ: Այստեղ են ասել՝ բա ձեզ պետք էր՝ բաց բանակներից կատու շալակել... Եվ պատկերացրեք, որ այսօր շատ ԶԳ-շնիկներ են լռեցյալ այս հարցը տալիս իրենց առաջնորդին:

Ասում է՝ իմ դարդն ինձ քիչ էր, հարեւանս էլ «լիթոն» (այժմ) է առել: Սրանց է հիմա՞ այսքան քիչ էր, ընդդիմությունն էլ սկսել է միա-

վորվել, դաշինքներ կազմել, խոշորանալ: ԱԺ-ում ԶԳ-ն մի դրոմ էլ ունի, որ օժտված է վտանգն զգալու բացառիկ ունակությամբ: Բառացի էր, թե՛ հասեք, օլիգարխները միավորվում են, իսկ որ ընտրություններում հաղթեն, էլ՝ վերջ, կոռուպցիայի դեմ պայքարը կավարտվի: Հավանաբար, նկատի ունենալով Գագիկ Ծառուկյանի եւ Անդրանիկ Թեւանյանի գլխավորած քաղաքական թիմերի՝ «Առաջարկ Հայաստանին» ծրագրի շուրջ համախմբումը: Տո այ դրոմ, տո այ քաղաքական դիմ, էն, որ ավան ԶԳ-ի շեֆն ու քո անմիջական ղեկավարն ասել էին, թե իրենց օրոք ՀՀ-ում այլեւս օլիգարխ չկա, դա հեջ: Էն, որ ավան ԶԳ-ի շեֆը կմկմում էր ու չէր կարողանում բացատրել, թե ինչ են արել պարտքով վերցված 8,5 միլիարդ դոլարը, դա՛ էլ հեջ: Այ տղա, ԶԳ-ի կեսն այսօր օլիգարխ է, դուք ուրիշ տեղ եք օլիգարխ ման գալիս, 8,5 միլիարդով 3 հատ հնդկական «պիստակետ» առել, անորակ ասֆալտ եք փռել եւ ուրիշ տեղ եք կոռուպցիա փնտրում... Իսկ գուցե ավելի ճիշտ կլիներ խոստովանել, որ վիճակները ծանր է, որ հարցումները խայտառակ պատկեր են ցույց տալիս, որ մեկ ճակատով, այն է՝ ձեզ վնասելու օրակարգով հանդես եկող ընդդիմության դեմ խաղ չկա, որ իշխանությունը պահելու հավանականությունը միայն տեսական է...

**ՀԳ. Նահանգը երկու տեսակ է լինում՝ երգով եւ առանց երգի: ԶԳ-ն, կարծես, ընտրել է առաջին տարբերակը՝ երգում ա... Արդեն երգում ա:**

Էդիկ ԱՆԴՐԵԱՅԱՆ  
edik.andreasyan  
@hraparak.am

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, գանգեք մեզ 011 (55,94) 52 66 70, info@hraparak.am Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՅԵ ՀԱՅՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

**բաժանորդագրություն**  
Բաժանորդագրության համար դիմեք՝  
Պրեսա Ստեյդ՝ 093 88 68 01  
Բլից մեդիա 52 53 01


### հրապարակ

Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան  
թողարկման պատասխանատու info@hraparak.am



Ստորագրված է տպագրության 19.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

### ԱՆԱՊԱԳԱ ԱՊԱԳԱՅԻ ՄԵՂԱՎՈՐԸ ՊԵՏՔ Ե ՆԵՌԱՆԱ



Հ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը հերթական ինքնագովազդն է արել՝ տեսանյութում ցույց տալով «Հայոց պատմության» հատորներից մեկը: Իհարկե, գովելի է, որ ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմությունը: Բայց երբ խոսում է պատմության դասերը սերտելուց, աչքիս՝ չի գիտակցում, թե ինչ է դա նշանակում: Որովհետեւ այդ դեպքում իր 8-ամյա կառավարման արդյունքը չպետք է լիներ այդքան ողբերգական, ու այն չի դադարում այդպիսին լինելուց՝ անգամ եթե անընդհատ հայտարարի, թե Հայաստանն այսօր «գարգացման, ոչ թե գոյատեւման օրակարգի մեջ» է: Մեկ-մեկ մտածում ես, որ հայերեն գրող կամ խոսող մարդը չի ընկալում իր օգտագործած բառերի իմաստը: Ինչպես կարելի է գարգացում անվանել այն իրավիճակը, երբ մի ողջ պետություն գերի է թշնամու ձեռքին: Ու այդ պետության ղեկավարն էլ շարունակ կատարում է այն, ինչ պահանջում են թշնամի երկրի մայրաքաղաքից: Ել չասած, որ նրան ծաղրում են ու ստորացնում նույն մայրաքաղաքում ու նրա միջոցով՝ մեր ողջ ժողովրդին:

Թշնամական պահանջների կատարման օրինակները բազմաթիվ են՝ տարածքների եւ այդ թվում՝ «Չանգեզուրի միջանցքի» կորուստ, Սահմանադրության փոփոխության եւ «թուրանական ջուր խմելու» պատրաստակամություն, հայոց եկեղեցու դեմ պատերազմի նախաձեռնում է այլն, եւ այլն: Զբաղվարովելով մեկի՝ արեւելքից թշնամու պահանջները կատարելով, կատարում է նաեւ նրա արյունակից եղբոր պահանջները՝ ստիպելով մոռացության մատնել Արարատ լեռն եւ ցեղասպանությունը: Այսինքն, հայոց ինքնությանն ուղղված գործունեություն է իրականացնում: Զգիտեմ, եթե դա «իրական» Հայաստանի գարգացումն է, ապա ի՞նչ է գոյատեւումը: Երեւի դա էլ կլինի այն, որ Հայաստանը լցվի «արեւմտյան» ադրբեջանցիներով ու մի բանի սերունդ անց դադարի գոյություն ունենալուց՝ որպես պետություն:

Այնպես որ, եթե պատմության դասերը սերտելը հանգեցնում է նման արհավիրքների, ապա ավելի լավ չէր լինի, եթե վարչապետի պաշտոնը գրաված անձը զբաղվեր իր անմիջական պարտականությունների կա-

տարմամբ, ոչ թե հայոց պատմություն ուսումնասիրելով կամ հարվածային գործիքներ զարկելով: Ինչպես նաեւ՝ ոչ թե «իրական Հայաստանի» ցնորամիտ գաղափարախոսություն մոզոնելով, այլ դեռեւս գոյություն ունեցող իսկական Հայաստանի տնտեսությունը զարգացնելով ու անվտանգությունն ամրապնդելով: Ու եթե ընդունակ լինեք տեսնելու, որ իր ասած գարգացումը «կյանքի է կոչվում» միայն խոսքի մակարդակում, ապա հրաժարական ներկայացնելու ուժ գտնեք իր մեջ, հատկապես՝ այն ժամանակ, երբ ասվում էր, որ ինքնակամ հեռանալու դեպքում նրան պատասխանատվության չեն ենթարկի: Բայց ինքն այդքան քաջություն չգտավ իր մեջ, թեեւ իշխանության զավթումը սկսել էր «դուխով» գլխարկով: Զանի որ իր թիկունքին էր զգում սկզբում՝ Ռուսաստանի, այնուհետեւ՝ Եվրոպայի ու վերջում՝ Միացյալ Նահանգների աջակցությունը, նրա «քաջությունը» դրսեւորվեց սեփական ազգի, նրա ինքնության ու պատմության դեմ պատերազմ նախաձեռնելու մեջ, այս անգամ էլ՝ պաշտպանված ոստիկանական պատերով, ԱՄԻ-ի ու քննչականների հետապնդումներով, դատախազության ու դատարանների որոշումներով:

«Լավ եղեք»,- տեսանյութի վերջում ասում է Նիկոլը: Նրա դիրքում գտնվող մեկ այլ՝ արեւելյան անձը կհասկանար՝ որպեսզի ժողովուրդն իր ամբողջության մեջ լավ լինի, ինքը պետք է լքի վարչապետի պաշտոնը, որովհետեւ չեն կարող մարդիկ լավ լինել, եթե վստահ չեն վաղվա օրվա նկատմամբ: Եթե վստահ չեն, որ այսօրվա Հայաստանը, որը պայմանավորված է հայատյաց թշնամու բնահաճությամբ, վաղը հենց նույն այդ բնահաճությամբ չի փոխվելու պատերազմի կամ էլ՝ պարտադրանքի, որպեսզի ապահովվի Ղարաբաղյան շարժումով պայմանավորված՝ 30 տարի առաջ Հայաստանից հեռացած ադրբեջանցիների վերադարձի իրավունքը: Իսկ դա նշանակում է, որ մեկ-երկու սերունդ անց Հայաստանի Ազգային ժողովը կկոչվի «Միլի մեջլիս»: Իսկ եւս մեկ-երկու սերունդ անց՝ «հայաստանյան միլի մեջլիսը» կնեղանալի ադրբեջանականի կազմում: Ու աշխարհի քաղաքական բարտեզից կվերանա «Հայաստան» անվանումը: Իսկ որպեսզի դա տեղի չունենա, վարչապետի պաշտոնից պետք է հեռանա անապագա ապագայի այդ պատկերի մեղավորը՝ Փաշինյան Նիկոլը: